

ՌԱՇԻԴ-ԱԴ-ԴԻՆԻ «ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ» ԵՎ ՆՐԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

XIV դարի սկզբին իրանում հրապարակ եկավ պարսկերեն լեզվով մի աշխատություն, որն իր բնույթով և շարադրման սկզբունքներով նոր երևույթ էր համաշխարհային պատմական դրականության մեջ: Աշխատությունն ունի «Ջամիյատ-տավարիխ» («Տարեգրությունների ժողովածու»)՝ խորագիրը, նրա հեղինակն է ժամանակի իրանական պետական-քաղաքական ականավոր գործիչ, խոշոր մտածող, բազմակողմանի գիտնական (հիմնականում բժիշկ-բուսաբան), ազգությամբ պարսիկ Ռաշիդ-ադ-դին Ֆազլալահ Համադանին: Այս հեղինակի գրչին են պատկանում, բացի նշված աշխատությունից, նաև պատմական մի շարք այլ դործեր:

Ռաշիդ-ադ-դինը մուսուլման պատմաբաններից առաջինն էր, որ անհրաժեշտ համարեց ուսումնասիրել ոչ մուսուլման ժողովուրդների պատմությունը: Մինչ այդ մուսուլմանների մոտ ընդհանուր պատմությունը հասկացվում էր միայն որպես մահմեդական աշխարհի երկրների պատմություն:

Միջնադարյան Արևելքի տրագիգիանների խիստ պահպանողականության պայմաններում Ռաշիդ-ադ-դինը ոչ միայն խիզախեց հրաժարվել այդ ավանդներից, այլև հանդիսացավ ստեղծագործական աշխատանքի կոլեկտիվ սկզբունքի հիմնադիրը¹: Հայտնի է, որ Եվրոպայում այդ սկզբունքով առաջին աշխատանքը ստեղծվեց միայն XVI դարում Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում: Նկատի ունենք եկեղեցու պատմությանը նվիրված «Ecclesiastica historia Secundum singulas centurias» խորագիրը կրող աշխատությունը, որը հայտնի է նաև «Մագդեբուրգյան հարյուրյակներ» (ցենտուրիաներ) անունով²: «Տարեգրությունների ժողովածուն» կազմված է երկու հիմնական բաժիններից: Առաջին բաժնում շարադրված է մոնղոլների և նրանց կողմից հիմնադրած պետությունների պատմությունը: Երկրորդում՝ համաշխարհային պատմությունը³:

1 Մեր կարծիքով պրոֆ. Ի. Պետրուշևսկին միանգամայն ճիշտ նկատում է, որ աշխատությունը պետք է կոչվի ոչ թե «Տարեգրությունների ժողովածու», այլ «Պատմությունների ժողովածու», քանի որ այն սոսկ տարեգրությունների ժողովածու չէ, այլ երկրների ու ժողովուրդների պատմության շարադրանք, հեղինակի կողմից մշակված պատմագիտական սկզբունքներով: Տե՛ս Н. И. Петрушевский, Рашид-ад-дин и его исторический труд, «Сборник летописей», т. 1, кн. 1, М.—Л., 1952, էջ 7, ծան. 2, տե՛ս և А. Гаффаров, Из области персидской историографии монгольского периода հոդվածը «Древности Восточная» ամսագրում, 1913, т. 4, էջ 34:

2 В. Бартольд, История изучения Востока в Европе и в России, 1911, СПб, էջ 38—39, А. Гаффаров, Из области персидской историографии монгольского периода, տե՛ս журнал «Древности Восточная», т. 4, էջ 34, Н. Петрушевский, Рашид-ад-дин и его исторический труд, էջ 25—26:

3 В. Вайнштейн, Историография средних веков, Л., 1940, էջ 77—78:

4 Ինչպե՞ր են թարգմանության մեքենագրված տեքստը տե՛ս Архив ЛОИНА АН СССР, перевод с персидского Ю. И. Верховского.

Վերջինս պարունակում է ընդհանուր պատմությունը մինչև Իսլամը, Խալիֆաթի և մինչև մոնղոլական արշավանքները գոյություն ունեցող մուսուլմանական պետությունների և ոչ մուսուլմանական ժողովուրդների պատմությունը⁵։

Ռաշիդ-ադ-դինը, խախտելով տիրապետող տրադիցիան, առաջինն էր, որ հայտարարեց, թե մուսուլման ժողովուրդների պատմությունը համաշխարհային պատմության ծովը թափվող գետերից մեկն է միայն, թե ընդհանուր պատմությունը պետք է լինի իսկապես համաշխարհային պատմություն և ընդգրկի ժամանակի բոլոր հայտնի ժողովուրդների պատմությունը սկսած «Ֆրանկներից» — արևմտաեվրոպական ժողովուրդներից՝ արևմուտքում, մինչև չինացիները՝ արևելքում։ Ժողովուրդների պատմությունը, ըստ նրա, պետք է ուսումնասիրվի իրենց իսկ աղբյուրներով և իրենց ավանդների մեջ⁶։ Նա գրում է. «Պատմաբանի պարտականությունն այն է, որպեսզի նա յուրաքանչյուր ժողովրդի և (մարդկային ցեղի) յուրաքանչյուր տարակարգի (բոլոր) պատմազրույցները և տեղեկությունները հաղորդի և գրի առնի նույն այն նշանակությամբ, ինչպիսի նշանակությամբ նրանք մտցրել են դրանք իրենց գրքերում՝ և (ինչպես) այդ պատմազրույցներն ու տեղեկությունները նրանց մոտ բանավոր շարադրվում են — վերցնելով (նրանց) այն (կամ այլ) ժողովրդի մեջ հանրամատչելի հայտնի գրքերից և (այդ ժողովրդի) նշանավոր մարդկանց ասածներից... Իսկ եթե նա երևակայությամբ այդ (շարադրանքում) մտցնի որևէ փոփոխություն, ապա (նրա տեքստը անստարկելիորեն դուրս կգա անհիմն և ոչ ճիշտ)»⁷։

Ռաշիդ-ադ-դինի, որպես պատմագրի, կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա միջնադարյան Արևելքի պատմաբաններից առաջինն էր, որ համարձակորեն խիզախեց առանց որևէ կրոնական դոգմաների ազդեցության, բացառապես պատմական փորձի հիման վրա հաստատել պատմական էվոլյուցիայի օրենքները⁸։ Այս կապակցությամբ նրա մոտ կարդում ենք. «...Այս գրքի կառուցվածքը և այս տարեգրության (շարագրման)՝ ձևը այն է, որ մենք նախօրոք սահմանում ենք յուրաքանչյուր ցեղի և թագավորի անմիջական սերունդների տոհմաբանությունը և այն ժամանակ (արդեն) ձեռնամուխ ենք լինում տարեգրության և պատմությունների բուն իսկ էության շարագրմանը»⁹։

Յուրանքանչյուր ժողովրդի և պետության պատմությունը, նշում է նա, պետք է շարադրվի հարևան ժողովուրդների ու պետությունների պատմության հետ կապակցված։ Խոսելով այս մասին, նա քննադատում է իր «Տարեգրու-

⁵ Աշխատության ներածության մեջ հեղինակը նշում է, որ պատրաստել է և երրորդ րաժինը (հատորը), որպես հավելված երկրորդ րաժնի. այնտեղ տրված էին աշխարհի երկրների բարոտեղները, տարրեր պետությունների ճանապարհները, Սակայն այդ հատորը մեզ չի հասել։ Ռաշիդ-ադ-դինի այդ վկայությունը հաստատում է և նրա աշակերտ Վասսաֆը, նվրդական Ետադոտողները ժամանակին կասկածի տակ են առել այդ րաժնի առկայությունը և ենթադրել են, որ հեղինակը չի հասցրել այն գրելու (Տե՛ս А. Г а ф ф а р о в, նշվ. աշխ., էջ 34)։

⁶ Պրոֆ. Պետրուշևսկին ենթադրում է, որ այն կամ չի գրվել, կամ թե գրվել է և հետագայում ոչնչացվել հեղինակին մահապատժի ենթարկելու օրերին (տե՛ս «Сборник летописей», т. I, кн. I, էջ 24)։ Մենք հավանապես ենք համարում վերջին ենթադրությունը։

⁷ И. Петрушевский, նշվ. աշխ., տե՛ս «Сборник летописей», т. I, кн. I, էջ 24։

⁸ «Сборник летописей», т. I, кн. I, Введение, էջ 50։

⁹ В. Бартольд, История изучения Востока, էջ 58–59։

¹⁰ «Сборник летописей», т. I, кн. II, էջ 73։

թյունների» հիմնական աղբյուրներից մեկի հեղինակին՝ XIII դարի արաբականավոր պատմագիր Իբն-ալ-Ասիրին¹⁰։ «Որքան էլ որ,— գրել է նա,— նախկին պատմությունների հորինողներն ու հեղինակները կազմել են տարբեր դարաշրջաններին վերաբերող ամեն տեսակի գրքեր ու անկանոն պատմություններ, այնուամենայնիվ ընթերցողները դրանից իսկական օգուտ չեն ստացել։ Այդպես է (դրությունը) և հանգուցյալ Իբն-ալ-Ասիրի շարադրած պատմության մեջ։ Վերջինս չնայած և մեծ ջանքեր է գործ դրել, սակայն (նրա աշխատության մեջ) յուրաքանչյուր (առանձին) թագավորի մասին պատմածը չի տրված (ուրիշների) հետ կապի մեջ, և նրա (կյանքի) հանգամանքները անհրաժեշտ ձևով հայտնի չեն դառնում (որոշակի) հաջորդականությամբ և կարգով»¹¹։

«Տարեգրությունների ժողովածուն» շարադրված է հենց այս սկզբունքով։ Հանդիսանալով հիմնականում թագավորների և զինաստիանների պատմություն, այն արժեքավոր, ինքնօրինակ և կարևոր աղբյուր է Հուլավյանների ժամանակաշրջանի Իրանի և Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքի և դասակարգային պայքարի պատմության ուսումնասիրության համար։ «Տարեգրությունների ժողովածուն» պարունակում է հսկայական քանակությամբ տեղեկություններ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմական աշխարհագրության մասին։ Այն բովանդակում է նաև ոչ քիչ տեղեկություններ Իրանի ու նրա սահմանակից երկրների, Միջին Ասիայի և Կովկասի ժողովուրդների պատմությանը, ինչպես և ազգագրությանը, մշակույթին, կենցաղին վերաբերող հարուստ նյութ¹²։

Ինչպես պատմական գիտության զարգացումը, այնպես և Ռաշիդ-ադ-դինի իր նախորդը չունեցող աշխատության հանդես գալը Իրանում պայմանավորված էին XIII—XIV դարերում Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական խոշոր տեղաշարժերով և իրադարձություններով, որոնք և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին գիտության այդ բնագավառի զարգացման համար։ «Տարեգրությունների ժողովածուի» ստեղծման ամենակարևոր նախադրյալներից մեկը մոնղոլական աշխարհակալ կայսրության ստեղծումն էր։ Հիմնական նախադրյալներից էին նաև Արևելքի և Արևմուտքի երկրների հետ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների կապերի ծավալումը, որը, ինչպես միանգամայն ճիշտ նշում է արևելագետ Ի. Պետրուշևսկին, արդյունք էր մի կողմից խաչակիրների արշավանքների, Արևմուտքի և Արևելքի միջև կատարվող քարավանային-ծովային առևտրի մեծ աճի և մյուս կողմից՝ մոնղոլա-իրանական պետության՝ իլխանության և արևմտյան պետությունների միջև հարաբերությունների ընդլայնման։

Մոնղոլա-իրանական պետության մեջ պատմական գիտության զարգացմանը խթանեցին նաև մի շարք այլ կարևոր նախադրյալներ։ Նշված դարաշրջանում լայն ծավալ էր ստացել թարգմանչական գործը։ Մոնղոլերեն և ուլդուրերեն էին թարգմանվում արաբական, պարսկական և մյուս ժողովուրդների շատ գրական գործեր։ Ջուվեյնին վկայում է, որ նվաճված ժողովուրդների իշխող վերնախավերի մի մասը սովորում էր մոնղոլերեն և ուլդուրերեն¹³։

¹⁰ «Տարիխ-ալ-Կամիլ» (Ընդհանուր պատմություն) գրքի հեղինակը ծնվել է 1160 թ., մեռել է 1234 թ.։

¹¹ Сборник летописей, т. I, кн. II, էջ 73.

¹² И. Петрушевский, Рашид-ад-дин и его исторический труд, էջ 36.

¹³ Там же, էջ 24. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սեւական. Թիֆլիս, 1910, էջ 405։

Իլխանության արքունիքին կից գոյություն ունեւ հատուկ գրատուն, որտեղ կենտրոնացված էին նվաճված ժողովուրդների մտավորականության ներկայացուցիչները. մեր կարծիքով՝ հիմնականում լեզուների մասնագետները: Այդ գրատունը կոչվում էր «Բախշիան» կամ «Բիթիքչիանի դիվան»¹⁴: Այս կապակցությամբ Ռաշիդ-ադ-դինի մոտ կարդում ենք. «...իսկ այն, ինչ կրճատված է կամ մանրամասն շարադրված չի լինի այս գրատուններում, ապա թող նա (հետաքրքրվողը—Լ. Բ.) այդ մասին համապատասխան տեղեկություններ վերցնի շինական, հնդկական, ույղուրական, դաշաղական և ուրիշ ժողովուրդների գիտնականներից և իմաստուններից և (ներանց) նշանավոր մարդկանցից, որովհետեւ տարբեր ժողովուրդների բոլոր դասերի (ներկայացուցիչները) անբաժան կերպով գտնվում են նորին մեծության ծառայության մեջ...»¹⁵:

Որ իսկապես նվաճված ժողովուրդների գիտուն մարդկանց նրանք կարևոր տեղ էին տալիս և հատուկ ուշադրության արժանացնում, երևում է Կիրակոս Փանձակեցու մի վկայությունից, որտեղ նա, խոսելով իրեն գերի վերցնելու մասին, գրում է. «Ապա առին և դիս յրնկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս դպրութեան...»¹⁶: Հետագայում, երբ Վարդան վարդապետը խնդրում է մոնղոլ զորավարին Փանձակեցուն նույնպես ազատել փրկագնով, նա մերժում է ասելով. «Սա ի պէտք է մեզ թուղթ դրելոց և ընթերցման, թէպէտ բազում գինս տայք, ոչ տամք դսա»¹⁷: Վարդան վարդապետին փրկագնով ազատելուց հետո Ջարմաղանի զորավարներից՝ Մուլար նոյինը Փանձակեցուն ասում է. «Մի տրտմիր ընդ գնալ մեծ երիցուն. գրեզ վասն այնորիկ ոչ թողաք ընդ նմա, զի պիտանի ես մեզ. մեծացուցից գրեզ իբրև մի ի մեծաց իմոց...»¹⁸:

«Տարեգրությունների ժողովածուի» ստեղծման գործին ժամանակին տրվել է համապետական խոշոր նշանակություն: Նրա շարադրման ամբողջ ընթացքը գտնվել է ինչպես Ղազան խանի, այնպես և նրա հաջորդի՝ Ուլջեյտու խանի անմիջական հսկողության տակ: Ավարտելով աշխատանքը «Տարեգրությունների ժողովածուի» վրա, Ռաշիդ-ադ-դինը այն ներկայացնում է Ուլջեյտու խանին: Վերջինս գիրքը կարդալուց հետո ասում է. «Տվյալ գործի ստեղծման ընդհանուր նպատակն է եղել տալ այն, ինչ բանավոր փոխանցված է Ջինգիզ-խանի դարաբանից մինչև արդի ժամանակները (մոնղոլական ժողովրդի) բոլոր գործերի (բնագավառներից) և վերջինիս (ծագման) բացատրությունը և մեզ այդ ավելի պիտանի կլինի»¹⁹:

Արևելագետ Ի. Պետրուշևսկին միանգամայն իրավացիորեն նշում է, որ այդպիսի հսկայական ու բազմակողմանի աշխատության ստեղծումը մեկ մարդու ուժերից վեր էր. և ոչ մուսուլմանական ժողովուրդների ու երկրների պատմությունը կազմելու ժամանակ հեղինակը ցանկացել է հենվել նրանց սեփական աղբյուրների վրա, սակայն այդ աղբյուրների արաբերեն և պարս-

¹⁴ I. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatına medhat (ներածությունն օսմանական պետականության կազմավորման), Ստամբուլ, 1911, էջ 235:

¹⁵ Сборник летописей, т. I, кн. I, էջ 67:

¹⁶ Կիրակոս Փանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մեղիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 249:

¹⁷ Նույն տեղում, էջ 251:

¹⁸ Նույն տեղում, էջ 252:

¹⁹ Сборник летописей, т. I, кн. I, Введение, էջ 51:

կերեն թարգմանությունները չկային. ուստի Ռաշիդ-ադ-դինին անհրաժեշտ էին աշխատակիցներ՝ առանձին երկրների ու ժողովուրդների պատմությունը քաջատեղյակ մարդիկ²⁰: Ժամանակակից աղբյուրների ուսումնասիրությունը մեզ իրավունք է վերապահում ասելու, որ այդ օգնությունը նրան հարկավոր էր ոչ միայն ոչ մուսուլմանական առանձին երկրների ու ժողովուրդների պատմության շարադրման համար, այլև իր իսկ անմիջական նյութի՝ մոնղոլական արշավանքների, նվաճումների և տիրապետության հաստատման, իլխանությունների պատմության, նրա մղած պատերազմների և մի շարք այլ բաժինների շարադրման համար: Ռաշիդ-ադ-դինը իր աշխատությունը շարադրելիս օգտվել է ընդհանրապես իր դարաշրջանին, մասնավորապես մոնղոլներին, նրանց նվաճումներին, տիրապետությանը, նրանց ներքին ու արտաքին քաղաքականությանը, ֆեոդալական հակամարտություններին, կենտրոնախույս ուժերի դրսևորմանը, նվաճված երկրներում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին վերաբերող հավաստի աշխատություններից և այդ իրադարձություններին քաջատեղյակ մարդկանցից:

Պատմագրության մեջ արդեն ասվել է, որ «Տարեգրությունների ժողովածուն» ստեղծագործական կոլեկտիվ աշխատանքի արդյունք է²¹: Նման աշխատանքի արդյունք է հատկապես ոչ մուսուլմանական երկրների ու ժողովուրդների պատմությունը բովանդակող երկրորդ հատորը: Աշխատության մեջ Ռաշիդ-ադ-դինը տալիս է իր աշխատակիցներից մի քանիսի՝ դրանց թվում մոնղոլական ավանդություններին քաջածանոթ անձնավորության, չինական երկու գիտնականների և Քաշմիրից՝ բուդդայական մենակյացի անունները: Ակադեմիկոս Բարտոլդը, խոսելով «Տարեգրությունների» հեղինակային կոլեկտիվի մասին, գրել է. «Եվրոպայի պատմության մասին Ռաշիդ-ադ-դինի տեղեկությունների բնույթը ցույց է տալիս, որ նա օգտվել է նաև ֆրանսիական կաթոլիկ մենակյացի աշխատակցությունից»²²:

Ներկա հոգվածում փորձ է կատարվում ցույց տալու, որ միջնադարյան Արևելքի պատմագրության խոշորագույն նվաճումներից մեկի՝ Ռաշիդ-ադ-դինի «Տարեգրությունների ժողովածուի» աղբյուրներից են եղել նաև մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի հայկական աղբյուրները, բրոնջ հրապարակ են եկել մինչև Ռաշիդ-ադ-դինի՝ այդ կարևոր պետական հանձնարարությունը ձևակերպելը:

Մենք նկատի ունենք Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» (ավարտված 1265 թ.), Վարդան վարդապետի «Պատմութիւն տիեզերականը» (1265 թ.), Գրիգոր պատմիչի (Մաղաթիա) «Պատմութիւն վասն ազգին նետողացը» (1275 թ.), Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսականը» (1297 թ.), նույնի տարեգրությունը²³ (1290 թ.), Հեթում պատմիչին վերագրված տարեգրությունը (1296 թ.), նույնի ազգաբանելան աշխատու-

²⁰ И. Петрушевский, Рашид-ад-дин и его исторический труд, էջ 53:

²¹ В. Бартольд, История изучения Востока, էջ 38—39, А. Гаффаров, *Եզդի-աշխ.*, էջ 31, И. Петрушевский, *Եզդ. աշխ.*, էջ 33:

²² В. Бартольд, *Եզդ. աշխ.*, էջ 38:

²³ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը և պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանը այդ տարեգրությունը վերագրում են Սյունիքի մի ուրիշ Ստեփանոս եպիսկոպոսին:

թյունները և ֆրանսերեն աղբյուրների (հիմնականում «Պատմություն Քրոնիկոնի») հիման վրա կազմած ժամանակագրությունը:

Այս ենթադրությանն ենթ հանգել նկատի ունենալով մի կողմից՝ հայկական աղբյուրների և «Տարեգրության» որոշ հատվածներում կամ բաժիններում նկարագրվող իրադարձությունների շարադրման ընթացքի նմանությունը, փաստական նյութի նույնությունը, առանձին դեպքերում՝ տեքստի բառացի համապատասխանությունը, մյուս կողմից՝ այն ղեկավար սկզբունքները, որով առաջնորդվել է Ռաշիդ-ադ-դինը՝ նա գրում է. «(Բարձրագույն հրամանի) (խոսքը Ղազան խանի մասին է—Լ. Բ.) կատարման գործում նա (հեղինակը—Լ. Բ.) ցուցաբերեց ծայր աստիճան լարված աշխատանք և ջանք: Այն զանազան (տարեգրություններ), որոնք գտնվում էին (թագավորական) զանձարանում, ուշադիր ընթերցելուց և նրանց իմաստը ստուգելուց հետո, դրան նա (հեղինակը—Լ. Բ.) միացրեց այն ամենը, ինչ առատորեն լսել էր նորին գերազանցության մոտ մշտապես ապրող՝ թագավորության իմաստուն մարդկանցից, ինչպես և (հավասարապես) յուրաքանչյուր դասի գիտնականներից և պատմաբաններից, այդ բոլորը ենթարկելով համապատասխան ստուգման»²⁴:

Ռաշիդ-ադ-դինը տարբերություն է դնում իր աղբյուրների մեջ. «...ապացուցված է,—կարդում ենք նրա մոտ,— որ լինում է պատմաբան, որը ղեկավար և պատումները, որոնք նա նկարագրում է և բանավոր շարադրում, նրանցից և ոչ մեկին ականատես չի եղել, լինում են և այնպիսի (պատմաբաններ), որոնք հանդիսանում են ղեկավարի և իրադարձությունների մասնակիցներ (և վկաներ), ուստի ղեկավարի պատմությունը նրանց մոտ հանդիսանում է անձնական դիտմունքների հիման վրա (և) ոչ լսելով շարադրված պատմություն»²⁵: Վերջիններիս էլ հենց նա տալիս է առաջնությունը:

Հայկական աղբյուրները հեղինակի համար հավաստի են, քանի որ նրանք ղեկավարին և իրադարձություններին ականատես և ականջալուր, որոշ ղեկավարում և մասնակից մարդկանց ձեռքով են գրված (Կիրակոս Գանձակեցի, Վարդան վարդապետ, Գրիգոր պատմիչ (Մաղաթիա), Ստեփանոս Օրբելյան, Հեթում պատմիչ):

Կիրակոս Գանձակեցին ոչ միայն ականատես և ականջալուր հեղինակ է, այլև գերության մեջ իր սեփական կաշվի վրա զգացել է նվաճող մոնղոլների դաժան հալածանքները²⁶: Նա գրել է այն, ինչ «...աչօք մերովք տեսաք...»²⁷, ինչ «...պատմեսց մեզ Գրիգոր իշխանն... զոր իւր իսկ լեալ էր ի մեծ առնէ միոջէ ի կարի աւագացն, որում անուն էր Ղութուննուին...»²⁸, այն, ինչ «...աչօք մեր ոչ տեսաք, բայց բազումք էին, որ հաւատարմացուցանէին, թէ ականատես լեալ եմք»²⁹: Խոսելով Հովհաննես Գառնեցու մասին, նա նշում է. «Վասն սորա բազումք բազում ինչ պատմէին, բայց առաւել հարազատն մեր և սքանչելին Վարդան վարդապետն, որոյ բանքն արժանի էին հաւատարմութեան, զի նորա սիրով կապեալ էին ընդ միմեանս: Զի մեր մարմնով զնա ոչ տեսաք վասն հե-

²⁴ «Сборник летописей», т. I, кн. I, л. 69:

²⁵ Նույն տեղում, լ. 48:

²⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, լ. 243—253:

²⁷ Նույն տեղում, լ. 231:

²⁸ Նույն տեղում, լ. 272—273:

²⁹ Նույն տեղում, լ. 321—322:

աւորութեան, նա ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի մարուց նորա մաս-
նաւոր և ասաց, թէ՝ «Ենքն իսկ Յովհաննէս ասաց մեղ...»³⁰։ Նկարագրելով Հե-
թում Ա. թագավորի մոնղոլական արքունիք կատարած այցելութիւնը, Կիրա-
կոս Գանձակեցին գրում է. «Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր
նա մեզ... Բազում և այլ ինչ պատմէր թագաւորն իմաստասէր ի խժական ազ-
գացն, զոր թողաք մեր, զի մի աւելորդ ումեք թուեսցի՝»³¹։ Բաղդադի գրավման
պատմութիւնը տվել է Պոռշ իշխանի պատմելով. «Եւ զայս ամենայն պատմեաց
մեզ իշխանն Հասան, զոր Պոռշն անուանէին... որ ականատես և ականջաւոր
էր իրացս, մեծ պատուով պատուեալ յաչս իւանին»³²։ Ի դեպ, Պոռշը ոչ միայն
ականատես և ականջաւոր էր, այլև Հուլավու խանի աչքի ընկնող գորավար-
ներից էր և անձնատուր լինելու պահանջով խալիֆին ներկայացած դեսպան-
ներից մեկը³³։

Ստեփանոս Օրբելյանը իլխանության ղեկավար շրջաններին շատ մոտ
կանգնած անձնավորութիւն էր և սերտ շփման մեջ էր նրանց հետ։ «Իսկ յետ
վախճանին սորա,—կարդում ենք նրա մոտ,—թագաւորեաց Քեղաթուն... Աւ-
որ գնացեալ մեր, և ի նմանէ ընկալաք պատիւ որպէս յեղբօրէն. և առաք հրո-
վարտակ հրամանի վերստին հաստատութեամբ։ Ապա յետ այսր ի թագաւորեի
Ղազանին գնացաք և առ նա, և բարձրագոյն ի նմանէ ընկալաք փառս քան
յայլոցն, զի ետ կրկնապատիկ ամրութեամբ գնոյն հրովարտակ...»³⁴։

Հեթում պատմիչը ոչ միայն ականատես և ականջաւոր հեղինակ է եղել,
այլև ժամանակի ակտիվ պետական-քաղաքական գործիչ։ Իր իսկ վկայու-
թյամբ՝ նա «Ի Մանգոյ խանէ մինչև ի մահ Հուլաւունի պատմէ զոր միանգամ
լուաւ ի քեռոյ իւրմէ՝ որ առաջիկայ գտաւ եղելոցն ամենայնի։ Ի սկզբնաւո-
րութենէ Ապաղայ խանին մինչև ի վերջ գրոցս՝ ականատես եղև ամենայն
գործոց»³⁵։ Խոսելով Ղազան խանի դեպի Ասորիք կատարած արշավանքի մա-
սին, նա գրում է. «Եւ եղբայր Հեթում զայս ամենայն աչօք տեսի, զի առաջի-
կայ էի։ Այն էր սքանչելի, զի Ղազան այր փոքրահասակ և տգեղ դիմօք...»³⁶։
Նկարագրելով Դամասկոսի տակ մոնղոլների կրած պարտութիւնը, Հեթումը
նշում է. «Կորեան բազումք ի թաթարաց, ի հայոց և ի վրաց. և ըստ դիպաց
այլք դարձան ի տեղիս իւրեանց. յորոց միջի գտաւ և պատմաբանս»³⁷։ Հեթումը
մասնակից է եղել Եգիպտոսի դեմ մոնղոլ-կիլիկյան բանակների արշավանք-
ներին, Հեթում Բ. թագավորի կողմից դիվանագիտական հանձնարարութիւններ
է կատարել իլխանների արքունիքում։

Վարդան վարդապետը նույնպես Հուլավյանների արքունիքում ճանաչված
և մեծ կշիռ ունեցող հոգևորական գործիչներից էր, որի հետ, ինչպես պատմիչն
է վկայում, հաշիվ էր նստում անգամ Հուլավու խանը³⁸։

³⁰ Նույն տեղում, էջ 349։

³¹ Նույն տեղում, էջ 371—372։

³² Նույն տեղում, էջ 384։

³³ Նույն տեղում, էջ 380։

³⁴ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 482—483։

³⁵ «Հեթում պատմիչ Թաթարաց», Վենետիկ, 1842, էջ 68։

³⁶ Նույն տեղում, էջ 62։

³⁷ Նույն տեղում, էջ 66։

³⁸ Վարդան վարդապետ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 204—209։

Հաշվի առնելով մեր պատմիչների՝ նկարագրվող իրադարձություններին՝ ականատես, ականջալուր և մասնակից լինելու մասին վկայությունները, կարծում ենք, որ Ռաշիդ-ադ-դինն ու նրա հեղինակային կոլեկտիվը և հայ ժամանակակից պատմիչները օգտված կարող էին լինել միևնույն սկզբնաղբյուրից, որը թերևս մեզ անհայտ է:

Միաժամանակ մեզ հայտնի է, որ մինչև Ռաշիդ-ադ-դինի աշխատության հանդես գալը Հուլավյանների արևմուտքում մղած պատերազմական գործողությունների, քաղաքական կյանքի, ֆեոդալական կենտրոնախույս ուժերի ակտիվացման, միջֆեոդալական հակամարտությունների մասին բացի հայկական աղբյուրներից ուրիշ աղբյուրներ չունենք:

Թե ինչ լեզվով են օգտագործվել Ռաշիդ-ադ-դինի և նրա հեղինակային կոլեկտիվի կողմից հայկական աղբյուրները, որոշակի ոչինչ հայտնի չէ: Հայկական նշված աղբյուրների պարսկերեն թարգմանության մասին ոչ մի վկայություն, անգամ ակնարկի ձևով, չունենք: Պետք է ենթադրել միայն, որ «Տարեգրության» հեղինակը այդ աղբյուրները կարող էր օգտագործել կա՛մ պարսկերենին տիրապետող հայ մասնագետների օգնությամբ, որոնք հայերեն տեքստերը վերապատմում էին պարսկերեն և իր ցուցումով դրի առնում անհրաժեշտ նյութը կամ հատվածները, կա՛մ հայերենին տիրապետող պարսիկ մասնագետների օգնությամբ համապատասխան նյութն ընտրելով և պարսկերենի վերածելով: Ռաշիդ-ադ-դինը շարադրել է. «...այն ամենը, ինչ գտել է ամեն մի ժողովրդի գրված հայտնի գրքերում... բանավոր հաղորդումներում...»³⁹, «...իսկ հին գրքերի բովանդակությունից արվել են (համապատասխան) քաղվածքներ»⁴⁰:

Ռաշիդ-ադ-դինի և նրա հեղինակային կոլեկտիվի կողմից հայկական աղբյուրների օգտագործման մասին մեր առաջադրած կարծիքի հավանականությունն օգտին է խոսում և այն վկայությունը, որը բերում է Միքայել Չամչյանն իր «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ իր ձեռքի տակ եղած և, դժբախտաբար, մեզ չհասած աղբյուրից: Այնտեղ ուղղակի ասված է, թե Ղազան խանը հանձնարարություն է տվել Կիլիկիայի Հեթում Բ թագավորին՝ «...գրի ի պատմութեան Կիլիկեցւոց, և գիրս ասորւոց առ ասսեմանեաւ»⁴¹:

Ենթադրում ենք, որ Ռաշիդ-ադ-դինը հայկական աղբյուրները օգտագործել է այնպիսի կարևոր հատվածներ շարադրելու համար, ինչպիսիք են մոնղոլների կողմից Ատրպատականի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի տերիտորիաների նվաճումը, նրանց ներքին քաղաքականությունը, իլխանության ներսում՝ ռազմա-քոչվորական ազնվականության ներքին միջֆեոդալական հակամարտությունները, կենտրոնախույս ուժերի դրսևորումները, Հուլավյանների մղած պատերազմները և ուրիշ շատ հարցեր:

Մոնղոլների կողմից Միջին Ասիան և Իրանը նվաճելու և Անդրկովկասում ծավալված նրանց ռազմական գործողությունների պատմությունը շարադրելու համար նրա հիմնական աղբյուրներն են եղել Իբն-ալ-Ասիրի պարսկերեն լեզվով գրած «Տարիխ-ալ-Կամիլ» աշխատությունը, որը ընդգրկում է մինչ 1231 թ. իրադարձությունները և պարսիկ պատմիչ Զուվեյնիի «Տարիխ-ի-Ջեհանգուշա» (Պատմություն աշխարհի նվաճողի) աշխատությունը, որն ավարտվում է

³⁹ «Сборник летописей», т. 1, кн. 1, Введение, էջ 30:

⁴⁰ Նույն տեղում, էջ 48:

⁴¹ Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 294:

1257 թ. դեպքերով: Սակայն փաստերն ասում են, որ այս երկու հիմնական աղբյուրների հետ նրա ձեռքի տակ եղել են և հայկական աղբյուրներ, որոնց փաստական նյութը նա հիմք է ընդունել ու շարադրել աշխատության նշված հատվածների այս կամ այն բաժինը: Այսպես, մոնղոլական հետախույզ ջոկատի՝ Անդրկովկասում ծավալած ոազմական գործողությունների հերթականությունը և ընթացքը շարադրված են ոչ թե ըստ Իրն-ալ-Ասիրի, այլ ըստ Կիրակոս Գանձակեցու: Բերենք մի երկու փաստ: Կիրակոս Գանձակեցու մոտ հետախույզ ջոկատի և վրաց-հայկական ուժերի միջև երկու ճակատամարտ է տրված (1220—1222 թթ.), մինչդեռ Իրն-ալ-Ասիրի մոտ երեք: Այդ ուժերի միջև տեղի ունեցած երկրորդ ճակատամարտի մասին (Կոտման գետի մոտ) Իրն-ալ-Ասիրի մոտ կարդում ենք. «Երգվում էմ ասածով, որ ընթերցողները, որոնք մեզանից շատ ժամանակ հետո հանդես կգան, գրքերում կարդալով այդ դեպքի մասին, չեն հավատա դրան և կհամարեն անհավանական: և նրանք ճիշտ կլինեն: Եթե նրանք չեն հավատա, ապա թող նայեն այն բանին, որ գրել ենք մենք և բոլոր նրանք, որոնք գրում են մեր ժամանակներում. երբ բոլոր գիտունները և անկիրթները միատեսակ գիտեն այդ դեպքը նրա հանրահայտության համար»⁴²: Այս ճակատամարտի մասին վկայություններ են պահպանել և հայկական մյուս աղբյուրները: Մինչդեռ Կիրակոս Գանձակեցու մոտ նրա մասին ամենափոքր ակնարկ անգամ չկա: Նրա մասին ոչինչ չի ասված և Ռաշիդ-ադ-դիլի մոտ: Եվ քանի որ մեր այս երկու հեղինակների մոտ այդ ճակատամարտը անտեսված է, ուստի նրանք չեն նշում և Ակուշի անունը,— Ատրպատականի տիրակալ Ուզբեկի վասալներից մեկին, որը դավաճանել էր և անցել մոնղոլների կողմը և այդ երկրորդ ճակատամարտում իր զորամասով պատերազմել էր առաջին շարքերում: Մեզ հայտնի չէ, թե ինչու Գանձակեցին լռության է մատնում այդ դեպքը, որը Իրն-ալ-Ասիրը այդպես խտացրած գույներով է նկարագրում: Ավելի տարօրինակ է, որ Ռաշիդ-ադ-դիլն է լռության մեջ անցնում նման ակնհայտ փաստի կողքով: Ասում ենք ավելի տարօրինակ է, քանի որ այն հակասում է հեղինակի ցանկությանը. «...Հնարավոր է,—գրում է նա,—որ (կազմողի) բանականության կամ (այս կամ այն) հաղորդողի անփութության պատճառով (հենց նոր հիշատակված) ամբողջությունից որոշ բան թվա բաց թողնված, սակայն շնայած դրան հեղինակի սուտ սրտանց ցանկություն է եղել, որպեսզի հնարավորին չափ կատարելապես չանհետ գործադրի բերված այս պատմությունների (հետազոտության) ստույգության նկատմամբ»⁴³ (ընդգծումը մերն է—Լ. Բ.):

Հեղինակի կողմից երկրորդ ճակատամարտի նկարագրության բացթողումը թերևս բացատրվի առանձին իրադարձությունների և անձնավորությունների նկատմամբ ցուցաբերած սուբյեկտիվ մոտեցմամբ, որից նա զուրկ չէ: Ակուշը Ուզբեկի վասալն էր և նրա դավաճանական այդ քայլը պատիվ չէր բերում հեղինակի հայրենիքին ու ժողովրդին: Որ իսկապես Ռաշիդ-ադ-դիլը քննադատական մոտեցում է ցուցաբերել իր աղբյուրների նկատմամբ, պարզ երևում է հետևյալից. Կիրակոս Գանձակեցու մոտ մոնղոլական ջոկատը Անդրկովկաս

⁴² Ибн-а-л-Асир, Тарих-ал-Камилъ, Баку, 1940, էջ 138:

⁴³ Վարդան վարդապետ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 127: Մադաթիա, Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 6:

⁴⁴ Сборник летописей, т. 1, кн. 1, Введение, էջ 30:

է ներխուժում Դերբենդից⁴⁵, Ռաշիդ-ադ-դինը մյուս աղբյուրների հիման վրա ճշտում է այդ բացահայտ սխալը և ջոկատի ներխուժումը տալիս է Ատրպատականից⁴⁶։ Մոնղոլական ջոկատի և վրաց-հայկական ուժերի միջև տեղի ունեցած երրորդ ճակատամարտի ընթացքում մոնղոլ զորավարները տակտիկական նկատառումներով իրենց ուժերի մի մասը դարանում են պահում՝ թշնամուն թիկունքից հարվածելու նպատակով, տակտիկական այս քայլն էլ վճռում է ճակատամարտի բախտը հոգուտ իրենց։ Այս մասին բացի Կիրակոս Գանձակեցուց և ոչ մի աղբյուր չի նշում։ Ռաշիդ-ադ-դինը հենվելով Գանձակեցու այս վկայության վրա, տալիս է ճակատամարտի նկարագրությունը և ցույց է տալիս, որ միայն տակտիկական այդ քայլի շնորհիվ մոնղոլներին հաջողվեց հաղթանակ տանել լավ նախապատրաստված վրաց-հայկական ուժերի նկատմամբ։

Ռաշիդ-ադ-դինի կողմից հայկական աղբյուրների օգտագործումը ավելի որոշակի և ակնհայտ երևում է Հուլավու խանի և նրանից հետո ընկած երկուերեք տասնամյակների ժամանակաշրջանի իրադարձությունների նկարագրության մեջ։ Այսպես, Հուլավու խանի նվաճումները տրված են գրեթե նույն պլանով, ինչպես Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի մոտ։

Ըստ հայկական նշված աղբյուրների, Հուլավուն, գալով Արևմուտք, նվաճում է մլհեռների երկիրը Ալամոթ կենտրոնով⁴⁷, հարկադրում է Բաշուին իր բանակով նվաճել Ռումը⁴⁸, որից հետո նախապատրաստվում է Բաղդադի խալիֆայության նվաճմանը⁴⁹։ Այն նվաճելուց հետո ձեռնարկում է Ասորիքի արշավանքը, գրավում Հալեպը և մի շարք այլ քաղաքներ⁵⁰։ Սակայն ստանալով եղբոր՝ Մանգու խանի մահվան լուրը, վերադառնում է Բրան, իսկ նրա զորավարները շարունակում են Փոքր Ասիայի տերիտորիաների նվաճումը⁵¹։

Դեպի Ասորիք ձեռնարկած արշավանքի ժամանակ ճանապարհին Հուլավուն շատ է հավանում Ալադադի շրջանի հարուստ արոտավայրերը և Դարույնքի (Դառան) դաշտը դարձնում է իր ամառանոցանիստ վայրը ու այնտեղ ծավալում շինարարական խոշոր աշխատանքներ⁵²։ Հայկական աղբյուրների նկարագրած այդ իրադարձությունների հաջորդականությունը նույնությամբ տրված է Ռաշիդ-ադ-դինի մոտ։ Ավելին, առանձին դեպքերի նկարագրության ժամանակ վերջինս, առանց էական փոփոխությունների, հարազատ է մնացել իր սկզբնաղբյուրներին և գրեթե նույնությամբ տվել նրանց շարադրանքը։ Այսպես, վերջիններք Տիգրանակերտ քաղաքի պաշարվածների վիճակի նկարագրությունը Կիրակոս Գանձակեցու և Ռաշիդ-ադ-դինի մոտ։

⁴⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 201։

⁴⁶ „Сборник летописей“, т. I, кн. II, էջ 227—228։

⁴⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 376։ Վարդան վարդապետ, էջ 196, „Сборник летописей“, т. III, էջ 28—32։

⁴⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 370, „Сборник летописей“, т. III, էջ 32—33։

⁴⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 377—384, Վարդան վարդապետ, էջ 197, Մադաբիա, էջ 26—27, „Сборник летописей“, т. III, էջ 33—47։

⁵⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 387—389, Վարդան վարդապետ, էջ 197—198, Մադաբիա, էջ 35—36, „Сборник летописей“, т. III, էջ 49—51։

⁵¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 384—389, Վարդան վարդապետ, էջ 198—199, Մադաբիա, էջ 35, „Сборник летописей“, т. III, էջ 56—58։

⁵² Կիրակոս Գանձակեցի, էջ 396, Վարդան վարդապետ, էջ 198, Մադաբիա, էջ 32, Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 415, „Сборник летописей“, т. III, էջ 49, 67, 69, 88, 99։

Կիրակոս Գանձակեցի

«Եւ այսպէս զամս երկու եւ աւելի կրեալ պաշարումն, սաստկացաւ սովն ի քաղաքին, կերան զսուրբ և զանսուրբ կենդանիս, և ապա սկսան զմարգիկ ուտել առ ի շգոյէ կերակրոյն, զի զօրաւորքն զտկարսն ուտէին: Եւ յորժամ սպառեցան աղքատքն դարձան ի միմեանս և ուտէին հարթ զորդիս, և կանայք՝ զղստերս...»⁵³:

Ասվեց, որ Ռաշիդ-ադ-դինը հայկական աղբյուրներն օգտագործել է նաև իլխանության մեջ քոչվոր ազնվականության կենտրոնախույս ուժերի դրսևորումների, միջֆեոդալական հակամարտությունների պատմությունը շարադրելու համար: Վերցնենք երկու օրինակ:

1269 թ. Աբաղա խանի դեմ ապստամբում է արքայորդիներից Չաղաթայի թոռը, Նեկուդարը: Գրիգոր պատմիչը (Մաղաթիա) և Ռաշիդ-ադ-դինը հանգամանորեն խոսում են այդ ապստամբության մասին, տալիս են նրա ճնշման և Նեկուդարի սպանության նկարագրությունը:

Գրիգոր պատմիչ (Մաղաթիա)

«Ապա հրամայեաց Աբաղայ դանն Սիրամունին, ...առնուլ ճՌ հեծելս Տաթար: ...նոյնպէս հրամայեաց հայոց և վրաց զօրացն զնալ իւրեանց ամենայն ուժով ի վերայ Թակուդարին (պատմիչի մոտ Նեկուդարը կոչված է Թակուդար—Վ. Բ.), և յանխնայ կոտորել զնա, և առնուլ զամենայն ինչս նորա. և զինքն ղԹակուդարն կենդանի տանել առ ինքն... ապա կազմեցին իւրեանց (հայոց և վրաց զորքերը—Վ. Բ.) քաջապէս ի գործ պատերազմի, նոյնպէս և Սիրամունն՝ ...յանկարծակի հասին ի վերայ Թակուդարին, և յանխնայ կոտորեցին զհեծեալս նորա, և առին զամենայն զանձս նորա, և զինքն էճ մարդով տարան առ դանն, ...և ժ մարդ պահապան (նշանակեց—Վ. Բ.), յուղարկեց զնա ի մէջ աղի ծովուն, որ կայ ի Հեր և ի Զարաւանդ գաւառի...»⁵⁴:

Ռաշիդ-ադ-դին

«...Մինչև շանցան երկու տարի և քաղաքում շմնաց սնունդ և ուտելիք, ինչպես և անասուն, սկսեցին ուտել լեշ, կերան (բոլորը) ընդհուպ մինչև շները, կատուները և մկները և այն ժամանակ դարձան մարդակերներ: Այդպես նրանք մեկ ամսում կերան մեկը մյուսին... որդին հորն էր ուտում, իսկ մայրը երեխաներին»⁵⁴:

Ռաշիդ-ադ-դին

«...Վրացական էմիրները անտառը շրջապատեցին և Դավիթ թագավորը նրան (Նեկուդարին—Վ. Բ.) լուր ուղարկեց, որ իբրև այդ անտառից ելք չկա, ետ վերադարձիր և մի վշտանա: Նրա ցուցումով Նեկուդարը անտառից դուրս եկավ և Շիրեմուն-նոյինը զորքով վրա հասավ և նրա զորքից շատերին սպանեց, իսկ մի մասին գերի վերցրեց... (Աբաղա խանը—Վ. Բ.) նրա (Նեկուդարի) վրա մոնղոլներից 50 մարդ նշանակեց պահակախումբ և ասում են նա բանտարկված է եղել Դարյա-ի Կաբուղանում»⁵⁶:

⁵³ Կիրակոս Գանձակեցի, էջ 385—386:

⁵⁴ „Сборник летописей“, т. III, էջ 33:

⁵⁵ «Մաղաթիայ արեղայի պատմություն վասն ազգին նետողաց», էջ 50—51:

⁵⁶ „Сборник летописей“, т. III, էջ 72:

Ստեփանոս Օրբելյանը իր տարեգրության մեջ և Ռաշիդ-ադ-գինը հանգամանորեն տալիս են Արղուն խանի դեմ էմիր Բուղայի դավադրությունը և նրա ջախջախման նկարագրությունը.

Ստեփանոս Օրբելյան

«Ապա ժողովեալ յինքն, զարացաւ, բարձրացաւ, գոռոզացաւ, հպարտացաւ, այրն այն և ոչ կարաց հանդուրժել իրացն, այլ կամեցաւ անձամբ յափշտակել յինքն և զաթոռ թագաւորութեանն և զբնիկ այրսն արմատա(ւ)ք ի ջնջել... Եւ յաւուր պայմանի Բուղայն, ինքն իսկ Արղունն վառեալ սուսերաւ և զրահիւք ԴԻ (4000) այր, յաւուր տարէմտին իւրեանց և խաղայ յանկարծ յառաւատուն ի վերայ բանակին և տանն Բուղային. զոր զիտացեալ փախստեալ անկանի ի շամբ մի մեծ և երթայ ի տուն Աւլա խաթունին, ... ընդ որում երազ ժամանեալ ըմբռնէին և հանեալ անտի շարամահ սատակէին. ընդ նմին և զամենայն ազգատոհմն և զարու զաւակ նորին ջնջէին. և զամե. նայն խորհրդակիցսն ի մեծամեծաց սատակեցին՝ զԱրուխն, զեղբայր նորին ի Բաղտատայ, զՈւճանն հազարապետ, զՄուժուն հազարապետ, զԽարաունաս Թուխլուխն հազարապետ, զԱշակ Թուխլուխն հազարապետ, զՀազանն ի Շարուր Դ (4) հազարապետ, զՋալալադին սահիպն, զՇիմոն քահանայն ասորի և բժշկապետ և այլ բազումս ի մեծաց և ի փոքունց... Եւ եղև այս ի մեծ դաշին Մուղանայ, յեզր Կուրայ...»⁵⁷:

Ինչպես ասվեց, Ռաշիդ-ադ-գինի օգտագործած հայկական աղբյուրներից են և Հեթում պատմիչի աշխատությունները: Դրանցից Ռաշիդ-ադ-գինը հիմնականում նյութեր է քաղել Եզիպտոսի և Ասորիքի դեմ իլխանության մղած պատերազմական գործողությունները, խաչակիրների, նրանց ստեղծած պետությունների, իլխանության ու եվրոպական պետությունների և պապի միջև՝ Եզիպտոսի դեմ պայքարի գործում ռազմական համագործակցություն ստեղծելու ուղղությամբ կատարված դիվանագիտական բանակցությունները և մի

Ռաշիդ-ադ-գին

«Կարճ ժամանակում նա (Բուղան—Լ. Բ.) մեծ հարստություն ձեռք բերեց և չափազանց հպարտանալով իր բարձր դիրքով և հարստությամբ, գոռոզացավ: ... Եվ այդ իսկ գիշերը նա (Արղունը—Լ. Բ.) հրամայեց զորքին, որ հեծնեն (ձիերը) Բուղային բռնելու համար և շրջափակեն նրա բանակատեղը և Քուռ գետի ափը:

Լուսադեմին... փութացին դեպի նրա (Բուղայի—Լ. Բ.) տունը, բայց Բուղային չգտան, քանի որ նա տեղեկանալով այդ մասին, նախով արդեն անցել էր Քուռը և ապաստան էր փրնտրում Օլջեյ-խաթունի բանակատեղում... անմիջապես բռնեցին նրան... Ջուշկաբը մի հարվածով կտրեց նրա գր-լուխը»⁵⁸:

Խոսելով Բուղայի համախոհների մասին, հեղինակը թվում է նրանց անունները. «...Իր եղբայր Արուկին... Ուլանին... հազարապետ Մայջուին... Ղազան Բահատուրին, չորս հազարյակի էմիր Իշիկ-Թուխլուխն, նրա եղբայր՝ Էշեկ-Թուխլուխն և հազարապետ Թուխլուխ-Խորաունին...»⁵⁹:

⁵⁷ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հատ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 48—49:

⁵⁸ «Сборник летописей», т. III, էջ 119—121:

⁵⁹ Նույն տեղում, էջ 120:

շարք այլ իրադարձություններ նկարագրելու համար: Այս տեսակետից բնորոշ հատվածներից է Ղազան խանի 1299—1303 թթ. դեպի Ասորիք կատարած արշավանքների, խուլիուշահ զորավարի հրամանատարությամբ գործող մոնղոլական բանակի տարած հաղթանակների ու կրած պարտությունների նկարագրությունը և այլն⁶⁰:

Ասվեց, որ Ռաշիդ-ադ-դինը աղբյուրներից վերցրած նյութերը վերաշարադրել է իր աշխատության կառուցվածքին և ոճին համապատասխան ձևով, իսկ առանձին դեպքերում բերել է նաև քաղվածաբար: Այդպես վարվել է նաև իր հիմնական աղբյուրների նկատմամբ, շնայած այն բանին, որ աշխատության ներածության մեջ ասում է, թե «...(գրքում) շարադրել է առանց որևէ փոփոխությունների, ձևափոխումների և ազատությունների այն ամենը, ինչ նա գտել է յուրաքանչյուր ժողովրդի գրված հայտնի գրքերում...»⁶¹: Դրանում համոզվելու համար վերցնենք միայն մեկ օրինակ: Իբն-ալ-Ասիրը բավական մանրամասն նկարագրում է մոնղոլական հետախույզ ջոկատի կողմից Շամախի քաղաքի գրավման համար ձեռնարկված պաշարողական աշխատանքները, նրանց պաշարողական տեխնիկան և ապա հարձակողական գործողությունները և քաղաքին հասցրած ավերածությունները, որից հետո Անդրկովկասից դեպի դիշաղների երկիրը մոնղոլական ջոկատի անցնելու կապակցությամբ գրում է. «...Վերջացնելով քաղաքի հետ, նրանք ցանկացան անցնել Դերբենդը, բայց չկարողացան այդ անել: Այն ժամանակ նրանք ուղարկեցին շիրվանշահին, Դերբենդի-Շիրվանի թագավորին ասելու, որպեսզի նա իրենց մոտ դեսպան ուղարկի հաշտություն կնքելու համար և նա ուղարկեց իր բարձրաստիճան մարդկանցից 10 հոգի: Թաթարները սպանեցին մեկին, իսկ մնացածին ասացին. «Եթե դուք ցույց տաք ճանապարհը, որով մենք կարող կլինենք անցնել այն, Դերբենդը, ապա ձեզ կտրվի ազատություն (աման), հակառակ դեպքում մենք կսպանենք այնպես, ինչպես սպանեցինք այս մարդուն»: Եվ նրանք նրանց պատասխանեցին, որ դեպի այդ Դերբենդ տանող ոչ մի ճանապարհ չկա, բայց նրա մեջ կա մի տեղ, որը եղած ճանապարհներից համարվում է համեմատաբար հեշտ անցանելի: Այն թաթարները նրանց հետ գնացին այն ճանապարհով և անցան (Դերբենդը)»⁶²:

Այս կապակցությամբ Ռաշիդի մոտ կարդում ենք. «Ճանապարհին նրանք գրավեցին պաշարումով Շամախի քաղաքը: Այնտեղ պատճառեցին ընդհանուր կոտորած և իրենց հետ տարան շատ ու շատ գերիներ: Այնքան, որքան Դերբենդը անցնել հնարավոր չէր, նրանք ուղարկեցին շիրվանշահին ասելու. «Դու ուղարկիր մի բանի մարդ, որպեսզի մենք հաշտություն կնքենք»: Նա ուղարկեց 10 մարդ իր ժողովրդի ազնվականներից, (նրանցից) մեկին (մոնղոլները) սպանեցին, իսկ մյուսներին ասացին. «Եթե դուք ցույց տաք մեզ Դերբենդով անցնելու ճանապարհը, մենք ձեզ կխնայենք, հակառակ դեպքում մենք ձեզ նույնպես կսպանենք»: Նրանք իրենց կյանքի համար վախից ցույց տվեցին ճանապարհը և նրանք անցան»⁶³:

Ինչպես տեսնում ենք, այստեղ Շամախի քաղաքի գրավման մասին ասված է ընդամենը մի երկու խոսք և դա նրան բավարարում է, որովհետև այդ

⁶⁰ Հեթումայանի, էջ 62—66, «Сборник летописей», т. III, էջ 193—196:

⁶¹ «Сборник летописей», т. I, кн. I, Введение, էջ 30:

⁶² Ибн-Али-Асир, Тарих-ал-Камиль, էջ 141—142:

⁶³ «Сборник летописей», т. I, кн. II, էջ 228—229:

է պահանջում նրա աշխատության շարադրման կառուցվածքի պլանը: Այս ձևով նա վարվել է և հայկական աղբյուրներից վերցված փաստական նյութի հետ:

Իհարկե, մի հոգվածում հնարավոր չէ ավելի ծավալուն փաստարկումներ բերել, սակայն վերը շարադրվածն էլ, կարծում ենք, բավական է հանգելու այն հավանական եզրակացության, որ Ռաշիդ-ադ-դինի ձեռքի տակ եղել են հայկական նշված աղբյուրները և նա դրանցից քաղել է համապատասխան նյութ, իսկ առանձին դեպքերում և որոշակի քաղվածքներ է արել իր «Տարեգրությունների ժողովածուի» համար:

«СБОРНИК ЛЕТОПИСЕЙ» РАШИД-АД-ДИНА И ЕГО АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ

Доктор истор. наук Л. О. БАБАЯН

(Р е з ю м е)

«Сборник летописей» Рашид-ад-дина появился в начале XIV в. в Иране. В свое время этот труд по характеру, широте замыслов и принципам изложения был совершенно новым явлением в мировой исторической литературе; в условиях консерватизма традиций средневекового Востока Рашид-ад-дин был первым мусульманским историком, считавшим необходимым также изучение истории немусульманских народов. Он считал, что всеобщая история должна охватывать историю всех известных народов данной эпохи и поэтому первым попытался определить законы исторической эволюции. «Сборник летописей» является одним из важнейших источников по изучению истории социально-экономической жизни и классовой борьбы Ирана и Закавказья в Гулагуидскую эпоху. В нем использованы достоверные источники эпохи.

В статье выдвигается мысль о том, что в числе использованных Рашид-ад-дином материалов были и армянские источники XIII в. (труды Киракоса Гандзакеци, Вардана вардапета, Григора Акнерци (Магакя), Степаноса Орбеляна и Хетума), написанные до создания «Сборника летописей». Это предположение сделано, с одной стороны, исходя из сходства плана, очередности и хода описываемых событий, сходства фактического материала, в отдельных случаях дословного соответствия текстов, изложенных в армянских источниках и в определенных разделах «Сборника летописей», а с другой стороны, из тех основных принципов, которыми руководствовался Рашид-ад-дин, придававший первостепенное значение сочинениям очевидцев событий. Такими авторами и являлись указанные армянские историки.